

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՀՐԱԽԻՐԱԿ ԵՐԿՐԻՆ ԱԻԵՏԵԱՅ**

... ՅՈՒՂԱՔԵՆՐ ընդ սուրբ կանանց լի բարձրեալ մեր զիւղ հաւատոյ,
 Մի՛ յանօթ բըրտի շինած, այլ ՚ի մաքուր սըրտի անօթ,
 Օ՛ն Մանկունք, հետեւելով գնամք ՚ի պարտէզըն Յովսէփայ.
 Առ քընարան Քրիստոսի՝ մեք շուրջ նըստիմք լո՛ւռ անձայն,
 Թող երգէ ողբաձայն զիւր շարական Մեծըն Սահակ,
 Այն ականց գոհարազարդ, զոր մատըն իւր շարահիւսեաց,
 Որ Յիսուսի սուրբ Թաղման, ո՛վ, հիացող երգահանն է,
 Եւ ո՛վ քան զայն կարէ երգել ըզմահու Դատեանն:
 ... Ո՛վ, Գերեզմա՛ն, Գերեզմա՛ն, որ մահու դրան կափարիչն ես,
 Եւ երկնից արքայութեան՝ դուռըն մըտից եւ ճանապարհ,
 յԱմէն ազգաց եւ աշխարհաց երամովին դիմեն գան,
 Թէ հարցանես՝ թէ ո՛ւր երթայք, ասեն գնամք յԵրուսաղէմ.
 Քրիստոսի Գերեզմանին երկրպագել մեք ուխտ ունիմք,
 Կա՛ց դու հանդէպ Գերեզմանին տես դու ո՛րպէս հոգւով ըղձիւ,
 Համբուրե՛ն-համբուրե՛ն զվեմն անշարժ եւ կենդանի,
 Եւ հաւատան քեզ, ո՛վ Տէր, թէ դու մեռար, թաղեցար աստ,
 Վա՛շ, մեռելոց աշխարհին, դու կեանս ետուր քո Յարութեամբդ.
 Անշա՛րժ մնասջիր, Գերեզման, Փրկչի մահուան յիշատակ:
 ... Մինչեւ ցարդ, ազնիւ Մանկունք, ՚ի բոլոր վայրս Տնօրինական
 Մարդացեալ Աստուածորդւոյն, շըրջեալ ընդ իս՝ հասաք ՚ի լրումն.
 Հրաւիրեմ այժմիկ զձեզ եւ խաչակրացն ՚ի վկայարանս,
 Վեհագոյն եւ հրաշակերտ ՚ի սուրբ Աթոռըն Յակովբեանց,
 Վեհագոյն եւ հրաշակերտ ՚ի սուրբ ձօնեալ Հայոց պարգեւ,
 Բարձրացեալ յարմարապէս ՚ի գլուխ լերինն Սիոնի.
 Ուր հանգչի գլուխըն պատուեալ Առաքելոյն Յակովբայ
 Որ ընդ յուրումն հարազատ խոստանային ըմպել զբաժակն:
 Անդ ՚ի հանգիստ կայ եւ մարմնով, որ արդարոյ կըրեր զանուն,
 Միւս Յակովբ աշակերտ, որ Տեառնեղբայր յորջորջէր,
 Նախ ՚ի մատուռըն մըտեալ՝ տացուք համբոյր Գըլխոյն այնմիկ,
 Որ պարծանք է հայոց ազգին, ում ժողովուրդ դիմէ յուխտ,
 Խընդրէ առնու, քանզի Աստուած փառաւորէ զծառայն իւր:

Խրիմնան Հայրիկ

1851 Կ. Պոլիս